«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2023/81

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 փետրվարի 2023 թ. N 81

«ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՍՊԸ-Ի ԲՈՂՈՔԻ ՄԱՍԻՆ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի 2020 թվականի մայիսի 8-ի N 1-Լ որոշմամբ ընդունված «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով» (այսուհետ՝ Ընթացակարգ), 2023 թվականի փետրվարի 10-ի նիստում քննարկեց «Մեսրոպ Մաշտոց համալսարան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Համալսարան) դիմում-բողոքը:

Դիմում- բողոքի պահանջը (առարկան).

Համալսարանը, առաջնորդվելով ՀՀ Կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգի և ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի 2020 թվականի մայիսի 8-ի N 1-Լ որոշմամբ ընդունված Ընթացակարգի դրույթներով, խնդրում է վերանայել Հանձնաժողովի որոշումը:

Գործի համառոտ նախապատմությունը.

ՈԱԱԿ-ի Հանձնաժողովը 2022 թվականի հոկտեմբերի 10-ի N 74 որոշմամբ «Մեսրոպ Մաշտոց համալսարան» ՍՊԸ-ին շնորհել է պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 (երկու) տարի ժամկետով:

2022թ. դեկտեմբերի 15-ին Համալսարանը ներկայացրել է ՈԱԱԿ-ի Հանձնաժողովի 2022 թվականի հեկտեմբերի 10-ի N 74 որոշումը վերանայելու մասին դիմում-բողոք:

Ընթացակարգով սահմանված ժակետներում ձևավորվել է երեք անդամներից բաղկացած Բողոքարկման հանձնախումբ, որը մեկամսյա ժամկետում ուսումնասիրել է Համալսարանի բողոքը և կազմել եզրակացություն: Եզրակացությունն ուղարկվել է հոգաբարձուների խորհուրդ, իսկ Խորհուրդը եզրակացությունն ուղարկել է Հանձնաժողով՝ նիստ գումարելու և որոշում կայացնելու համար:

Ուսումնասիրելով Համալսարանի դիմում-բողոքի հիման վրա կազմված Բողոքարկման հանձնախմբի եզրակացությունը, հավատարմագրման գործընթացի փաստաթղթերում

ներկայացված փաստերը, հիմնավորումները և հիմքերը, բողոքարկող կողմի ներկայացրած փաստերն ու փաստարկները, փորձագիտական զեկույցը, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները՝ **Հանձնաժողովը քննարկման արդյունքում ամրագրեց իր դիրքորոշումը Համալսարանի բողոքում նշված փաստարկների վերաբերյալ.**

1. Հանձնաժողովը համարում է, որ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովի կողմից ինստիտուցիոնալ հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացման քաղաքականությամբ (այսուհետ՝ Քաղաքականություն) սահմանված 1-ին ակնկալիքը Համալսարանի դեպքում համապատասխանում է Քաղաքականության Աղյուսակ 1-ի 2.1-րդ կետին՝ ***հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում:***
2. Հանձնաժողովը համարում է, որ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովի կողմից ինստիտուցիոնալ հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացման քաղաքականությամբ (այսուհետ՝ Քաղաքականություն) սահմանված 2-րդ ակնկալիքը Համալսարանի դեպքում համապատասխանում է Քաղաքականության Աղյուսակ 1-ի 2.2-րդ կետին՝ **կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են, որ բարելավվի որակավորումների շնորհման արժանահավատությունը:**
3. Հանձնաժողովը համարում է, որ Քաղաքականությամբ սահմանված 3-րդ ակնկալիքը Համալսարանի դեպքում համապատասխանում է Քաղաքականության Աղյուսակ 1-ի 2.3-րդ կետին՝ **միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը:**

Ելնելով վերը նշվածից՝ Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում.

ՈՐՈՇԵՑ

1. «Մեսրոպ Մաշտոց» համալսարան» ՍՊԸ-ին 2 /երկու/ տարի ժամկետով պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում շնորհելու մասին Հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 74 որոշումը փոփոխել և շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 /չորս/ տարի ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պետական հավատարմագրման գրանցամատյանում գրառման պահից:

Հավատարմագրման հանձնաժողովի

նախագահ **Աշոտ Սաղյան**

2023 թ. մարտի 14
ք.Երևան